

Թէ փոքրաւորն եւ այլք Թէ գաւառակից եմ նմա¹։ Թողու՞մք զլափիկզօղսն միշտ. որք վասն միոյ դահեկանի դաստուած եւ զհաւատսն վաճառեն։ Եւ ոմանք անւամբ կրօնաւորք՝ շրջին տունէ ի տուն եւ պատրեն կեղծիւք զպարզամիտսն եւ զշեղջակուտ տեալսն մեղօք։ Սոքա են որ զսուրբ եկեղեցիս եւ զվանորայս արկանեն ի ներքոյ հարկաց եւ տոկոսաբարդ պարտուց. այսս աւազակաց առնելով։ Սոքա են կարապետ Նեոին եւ աշակերտք Գերաքրիստոսին, որդիք աքարեան, կողոպտիչք տաճարին Աստուծոյ, քակտիչք խաղաղութեան եւ բորբոքիչք խռովութեան²։ Այսոցիկ պատճառն զի՞նչ, եթէ ոչ փառասիրութիւն, նախանձ եւ ագահութիւն։ Չայս ծրելով զմեզ դատեմք եւ ոչ զայլսն. զի՞ կայ մեր եւ զարտաքինսն դատելոյ։ Որոց ամենից Տէր այց արասցէ եւ զբարիսն օրհնեսցէ եւ զօրացուցէ. որ գիտէ զամենայն ինչ տնօրինել բնդ իւրում կարգի։ Նմա փառք եւ գոհութիւն։

1 Տոհմապաշտիկ դրութիւնը (népotisme) այնքան մշակուած է մեր հայ վանքերուն մէջ որ, կարելի է ամենէն զլսաւոր կամ ամենէն հզօր պատճառ մը գնել զայն վանքերու սոսկալի անկման։ Դեռ մինչեւ հիմայ, վանօրայք ընդհանրապէս կը հեծեն այդ դրութեան տակ։ Ճիշտ ցեցի պէս կ'ուտեն ասոնք վանքերը, ինչպէս անոնք շալերը. եւ երբ ընտիր շալը արեւի հանես, այն ատեն կը զգաս փեսային արժէքը։

Կոլոտ Ս. Կարապետի մէջ տեսած է զայն։ Ետքը Երուսաղէմ ալ տեսաւ պապաներու ատեն, որոնք տունով տեղով կը նստէին Ս. Յակոբայ յարկերուն մէջ, միաբանութիւնը նօթի կը նքթէր, ասոնք կը շուայտէին զեղխօրէն։

Ս. Կարապետի մէջ Կոլոտի ատեն կ'երեւայ շատ են եղեր իրենց եղբորորդի կամ քուերորդիներով ճոխացող արեղաներ, որոնց կ'անարկէ քիչ ետքը, Սարգիս Վարդապետը գոված ատեն։

2 Այս պարսաւի տողերը նոյն իմաստով եւ նոյն բացատրութիւններով հաննէ եւս կը գործածէ (էջ 105-106, 113-114)։